

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 928⁶-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ նոր բովանդակությամբ:

«Հոդված 928.6. Կառուցապատողի հատուկ հաշիվը, դրա մնացորդային հաշվի տնօրինման թույլատրելիության կարգը և սահմանափակումները»:

Հոդված 2. Օրենսգրքի 928⁶-րդ հոդվածի 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-16-րդ մասերով:

«8? Կառուցապատողի հատուկ հաշվի մնացորդի հաշվին կարող են ձեռք բերվել Հայաստանի Հանրապետության պետական դրամային պարտատոմսեր, ինչպես նաև ներդրվել բանկային ավանդի տեսքով Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերում՝ պայմանով, որ բանկը պարտավորվում է միջոցները վերադարձնել առաջին իսկ պահանջով՝ անմիջապես կառուցապատողի հատուկ հաշվին:

9? Կառուցապատողի կողմից սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված հատուկ հաշվի մնացորդային հաշվի տնօրինումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե համապատասխան համաձայնությունը հստակորեն ամրագրված է կառուցապատողի և գնորդի միջև կնքված պայմանագրով, որտեղ պարտադիր կերպով սահմանվում է նաև պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ դադարեցման, ինչպես նաև կառուցապատողի սնանկության դեպքում միջոցների վերադարձի և/կամ պարտատոմսերի փոխանցման պայմանները:

10? Եթե գնորդը չի տալիս համաձայնություն սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված հատուկ հաշվի մնացորդային հաշվի տնօրինմանը, պայմանագիրը ենթակա է փոփոխման՝ ապահովելով միջոցների պահպանումը բացառապես հատուկ հաշվին:

11? Պարտատոմսերից և բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսները տնօրինվում են հատուկ հաշվի մնացորդի դիմաց հաշվեգրվող տոկոսների համար սույն օրենսգրքով սահմանված կարգով, իսկ այդ պարտատոմսերի իրացումից կամ մարումից կամ բանկային ավանդի մարման/վերադարձման արդյունքում ստացված միջոցները անմիջապես մուտքագրվում են միայն կառուցապատողի հատուկ հաշվին:

12? Կառուցապատողի հատուկ հաշվի մնացորդի հաշվին ձեռք բերված պարտատոմսերի և բանկային ավանդների նկատմամբ կիրառվում են կառուցապատողի հատուկ հաշվի մնացորդի նկատմամբ սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները:

13? Կառուցապատողի հատուկ հաշվի մնացորդի հաշվին ձեռք բերված պարտատոմսերի ժամկետը չի կարող գերազանցել շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության ավարտի սկզբնական ժամկետը՝ առանց դրա երկարաձգման, և չի կարող գերազանցել շինթույլտվության տրամադրումից հետո մինչև երեք տարին:

14? Հատուկ հաշվի մնացորդի հաշվին պարտատոմսերի ձեռքբերումը իրականացվում է բանկի միջոցով, որը գործում է որպես օպերատոր:

Պարտատոմսերը կարող են ձեռք բերվել՝

- 1) առաջնային շուկայից՝ առանց սահմանափակումների,
- 2) երկրորդային շուկայից՝ բացառապես պարտատոմսի անվանական արժեքը չգերազանցող գնով:

15? Պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ դադարեցման դեպքում, ինչպես նաև կառուցապատողի սնանկության դեպքում՝

- 1) պարտատոմսը փոխանցվում է գնորդին՝ վերջինիս ընտրությամբ, կամ
- 2) պարտատոմսը իրացվում է շուկայական արժեքով, և ստացված միջոցները փոխանցվում են գնորդին:

16? Եթե պարտատոմսի շուկայական արժեքը իրացման պահին ցածր է դրա անվանական արժեքից, առաջացած տարբերությունը պարտադիր կերպով փոխհատուցվում է կառուցապատողի կողմից:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2? Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կառուցապատողի հատուկ հաշվում առկա մնացորդի վրա:

Հանրապետության նախագահ

Վ. Խաչատուրյան

2025 թ. —————

Երևան

ՀՕ————Ն